

1875—1890

1875էն 1880՝ Կ. Պոլիսի առևտր. հրապարակին վրայ յառաջացան քանի մը գաւառացիներ ալ՝ յղելով վաճառք մէկ կողմէն իրենց բնիկ երկիրը, միւս կողմէն փոխանակելով և ապա պոլսական հրապարակին վրայ ալ բանալով գործեր իրենց հաշիւին: Ասոնց կարգէն են՝ Իբրանոսեան եղբարք (Ամասիացի), որ ի վերջոյ մօտեցան Կիւլպէնկեանց ընդարձակութեան՝ իրենց բազմաճիւղ և բազմավայր գործերով. Կիւմլիշեան Աբրահամ⁽¹⁾ և Սւեաիս, որ շատ չկրրցան տեսել՝ հակառակ բազդին ժպիտներուն անգամ. Մանուկ Գոչունեան Կիւրիւնցի, Գէորգ Տէմիրճեան Խարբերդցի, Ճամրղեան հայր և որդի Կեսարացի, Մուրատեան եղբարք Կեսարացի և Ստամպոլլիբեան եղբարք նոյնպէս Կեսարացի: Այս վերջիններն ըրին մեծ գործեր ամէրիգանի վրայ քսան տարիի մը չափ և սեղանաւորութեան ալ ձեռնամուխ եղան. Յովհաննէս Կարապետ ու Եսայի Փափազեան, Գրիգոր Մսրրեան, Թոփալեան եղբարք, որոնց վրայ՝ իբրեւ ժրագոյններու՝ կարժէ ընդարձակուիլ քիչ մը գործոյս համեմատութեամբ:

Ծնած անած ու մարզուած Կիւրիւնի անձուկ այլ բանուկ ձորերուն մէջ՝ հսկողութեամբ իրենց համեստ հօր Կարապետ Թոփալեանի: նախանձախնդիր ընտանեկան սովորութեանց: պարզ ձեռներէցութեանց, երկիւ-

(1) Այս անձ՝ արժանացաւ անգամ մը 20,000է աւելի իրայի կտակեալ ժառանգութեան մը, զոր դարձեալ կորսնցուց.